ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում*

Դաստիարակ՝ *Ասպղիկ Հովհաննիսյան*

Մանկապարտեզ՝ *Գյումրու «Սուրբ Մարիամ» մսուր-մանկապարտեզ*

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3

ԳԼՈՒԽ 1

1.1. Էքսկուրսիայի անհրաժեշտության հոգեբանական մանկավարժական հիմնավորումը:_____5

1.2. Հայրենասիրական դաստիարակությունը մանկապարտեզում_____6

1.3. Էքսկուրսիաները, մշակութային այցերը՝ որպես նախադպրոցականի հայրենասիրական դաստիարակության միջոց_____10

ԳԼՈՒԽ 2

2.1. Ուսումնաճանաչողական էքսկուրսիայի հաշվետվություն_____15

2.2. Էքսկուրսիայի անցկացման մեթոդիական մանկապարտեզներում_____16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքը երեխայի անհատականության ձևավորման ու զարգացման ամենաբուռն շրջանն է: Հենց այս տարիքում են դրվում մարդու աշխարհայացքի, շրջապատող աշխարհի նկատմամբ նրա վերաբերմունքի հիմքերը: Երեխաները սովորում են հարգել միմյանց, ծանթանում այլ ազգությունների հետ, սովորում են իրենց սովորույթները ու ավանդույթները, մասնակցում ազգային տոնակատարություններին և ծիսակատարություններին: Այս ամենի հիմքը դրվում է հենց նախադպրոցական ուսումնական հաստատությունում՝ հայրենասիրական միջոցառումների, ազգային տոնակատարությունների, ուսումնաճանաչողական էքսկուրսիաների և այցերի միջոցով:

Մինչ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծրագրերի վերակառուցման մասին օրենքը, էքսկուրսիաները մեծ մասամբ անց էին կացվում բնությանը, արտադրությանը ծանոթացնելու նպատակով:Օրենքի հրատարակումից հետո ավելի քան երբևէ, բարձրացավ էքսկուրսիայի դերը: Այժմ ուսուցումը կյանքի հետ կապելու, դասավանդման մեթոդներն ու ձևերը կատարելագործելու և ակտիվացնելու նոր պահանջներից ելնելով՝ էքսկուրսիան դիտվում է որպես ուսուցման կազմակերպման մի յուրահատուկ ձև, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց:Գիտելիքի հաղորդումը կարելի է կատարել պարապմունք- էքսկուրսիաների միջոցով՝ նկատի ունենալով , որ այդ ձևով յուրացումն ավելի կայուն ու խորն է լինում, իսկ պարապմունքն ավելի աշխույժ ու հետաքրքիր է անցնում:

Նախադպրոցական շրջանը բավականին նպաստավոր է հայրենասիրական զգացմունքների դաստիարակման համար, քանի որ հենց այս ժամանակ է երեխայի մոտ տեղի ունենում մշակութային և արժեքային կողմնորոշումների ձևավորումը, դրվում են երեխայի անհատականության հոգևոր և բարոյական հիմքերը, նրա

հույզերի, զգացմունքների, մտածողության զարգացումը, հասարակության մեջ սոցիալական հարմարվողականության մեխանիզմները, սկսվում է ինքնաճանաչման գործընթացը: Նաև նախադպրոցական տարիքը բարենպաստ է երեխայի վրա հուզական և հոգեբանական ազդեցության համար: Անշուշտ, նախադպրոցականները որոշակի մակերեսային գիտելիքներ ունեն իրենց հայրենի քաղաքի, տարածաշրջանի և ընդհանուր առմամբ հայրենիքի մասին: Հենց այս հենքի վրա էլ մանկապարտեզում իրականացվում է երեխաների հայրենասիրական դաստիարակությունը: Երեխայի մոտ հայրենասիրության զգացումը պետք է լինի գիտակցված, ներթափանցի մանկական հոգեբանության մեջ, ներառվի իմացական գործընթացներում: Պետական, ազգային, եկեղեցական տոները, որոնք նշվում են մանկապարտեզում, նույնպես առանցքային նշանակություն ունեն այս համատեքստում, քանի որ երեխաները ստանում են ոչ միայն գիտելիք, այլև նրանց մեջ ձևավորվում է արժեքային վերաբերմունք դեպի ազգային ավանդույթներն ու հայրենիքը:Այս առումով իրենց արդյունավետությունն ունեն նաև էքսկուրսիաները, նպատակային զբոսանքները, թեմատիկ, մշակութային այցերը, որոնք ավելի պատկերավոր ու նկարագրական են դարձնում նախադպրոցականների պատկերացումները հայրենիքի, հայրենասիրության մասին:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենասիրական դաստիարակության անհրաժեշտությունը, այդ թվում էքսկուրսիաների, նպատակային զբոսանքների, թեմատիկ և մշակութային այցերի միջոցով:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել ավագ և միջին նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության եղանակները նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Հետազոտության խնդիրը: Դիտարկել այն արդյունավետ եղանակներն ու մեթոդները, որոնց միջոցով նախադպրոցական ուսումնական հաստատությունում

կարելի է հայրենիքին, նրա մնայուն արժեքներին ծանոթացնել սաներին, ինչպես նաև նրանց մեջ սերմանել հայրենասիրական զգացումներ:

ԳԼՈՒԽ 1.

1.1. Էքսկուրսիայի անհրաժեշտության հոգեբանական մանկավարժական հիմնավորումը:

Հիմք ընդունելով այն, որ օբյեկտիվ իրական աշխարհի ճանաչողությունը սկսվում է զգայությունից, ուսուցման պրոցեսում մեծ տեղ է տրվում էքսկուրսիային: Իրական աշխարհի զգայություններն ու ընկալումները համապատասխանորեն իմաստավորվում և վերամշակվում են մեր գիտակցության մեջ:Մեր աչքին միանում են մյուս զգայարանները և մտածողության գործունեությունը:Զննական ընկալումը հեշտացնում է աշակերտների գիտելիքների յուրացման պրոցեսը:Քանի որ աշակերտների մտածողությունը զարգանում է կոնկրետից դեպի վերացականը, ուստի զարգացման վաղ էտապներում նրանք մտածում են ավելի շատ պատկերներով, քան հասկացողություններով: Էքսկուրսիոն մեթոդը օգտագործվում է ՆՈՒՀ-ի կյանքի տարբեր բնագավառներում և հետապնդում է ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական նպատակներ: Էքսկուրսիան դաստիարակին հնարավորություն էտալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, պատճառի ու հետևանքի փոխկապվածությունը և մարդու վերաստեղծող ու վերաշինող ուժը: Ինչպես հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խ. Աբովյանն է նկատել՝(<<Երկերի լիակատար ժողովածու>>) բնությունն իր բազմապիսի առարկաներով ու երևույթներով, իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառահետևանքային զանազան կապերով, իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է, մի ուսուցիչ, որ ամենից հեշտ ու դյուրին ձևով, խոր ու կայուն կերպով սովորեցնում է մարդկանց բնությունը ճանաչել: Ահա թե ինչու ուսուցման պրոցեսում, մանավանդ ավագ և միջին խմբի երեխաների հետ, լայնորեն պետք է օգտագործել էքսկուրսիաները,

որպես ուսուցման միջոց, որպես շրջապատի բնությունն ու հասարակությունը ճանաչելու, շրջապատի մասին ռեալ գիտելիքներ հաղորդելու եղանակ:

1.2. Հայրենասիրական դաստիարակությունը մանկապարտեզում

«Անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»
Հովհ. Թումանյան

Թերևս ճիշտ էր մեծն բանաստեղծը, որ իր այս մտքով հաստատում էր մեկ այլ մեծ գրողի՝ Ռաֆֆու այն միտքը, թե «Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչությունից»: Դժվար կլինի սիրել ու պաշտպանել հայրենիքը, երբ ոչինչ չգիտես նրա անցյալի, ներկայի ու ապագայի տեսլականի մասին: Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը կրթական համակարգի կարևորագույն խնդիրներից մեկն է: Այդպես եղել է մեր ողջ բազմադարյան պատմության ընթացքում՝ պայմանավորված մեր պայքարող, չհանձնվող, ազատասեր տեսակով: Հենց այս ազնիվ գաղափարներն են, որ պետք է դրվեն մատաղ սերնդի մեջ հայրենասիրական զգացմունքներ դաստիարակելու հենքում: Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է նախադպրոցական կրթության ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունը կյանքի ամենանպաստավոր շրջափուլն է անձի մոտ հայրենիքի նկատմամբ սեփական պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար: Այս հարցն էլ ավելի սուր է ներկայանում մեր օրերում՝ պամանավորված արդի մարտահրավերներով:

Անշուշտ, հայրենիքը միայն հողն ու ջուրը չէ, ինչը պետք է անվերապահորեն պաշտպանել, հայրենիքը նաև մի մեծ տուն է, ընտանիք, որը հարկավոր է

ծաղկեցնել, շենացնել ու զարգացնել: Հայրենիքը պիտի յուրաքանչյուր երեխայի համար դարձնել հպարտության ու պատվի խորհրդանիշ: Կարծում ենք, որ այս գաղափարները պետք է դրվեն մատաղ սերնդի դաստիարակության հենքում, և նախադպրոցական ուսումնական հաստատությունն այս առումով ունի իր առյուծի բաժինը: Այս գիտակցումն այսօր, իհարկե, ունի համաժողովրդական բնույթ, քանզի հայրենասիրական դաստիարակությունը նաև հայ ընտանիքի մեծագույն հիմնասյունն է, բարոյական արժեհամակարգի կրողը:

Հայրենասիրական բնույթի զգացմունքները դրված են ողջ կյանքի և մարդկության առկայության վրա՝ որոշակի սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցության ներքո: Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա զգում է զգացմունքների օգնությամբ իրեն շրջապատող իրականությունը: Ահա թե ինչու, ցանկացած աճող սերնդի հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի սիրո և հարգանքի դրսևորումներով դեպի իր հայրենի քաղաքը, երկիրը: Սովորողների հայրենասիրական դաստիարակությունը պետք է իրականացվի անընդհատ: Այս համատեքստում առանցքային է նախադպրոցականի մոտ ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունձևավորումը, ինչը սահմանված է **նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով, համաձայն որի՝** «նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին. դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին»[1]: Այսպիսով, հայրենասիրական դաստիարակությունը պետք է ունենա անկյունաքարային նշանակություն, այստեղ պետք է հստակ երևա մանկապարտեզ-ընտանիք ամուր կապը, և սովորողի դաստիարակության հենքը երկուստեք պետք է ունենա նույն նպատակը՝ ունենալ հայրենասիրական գաղափարներով տոգորված, ազգի ու հայրենիքի հարկն իմացող սերունդ: Հայրենասիրություն դաստիարակելը

[1] «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ»

պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք. այն չի ձևավորվում միանգամից. դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ:

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Այն ամբողջական գործընթաց է, որն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի համակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա նախասիրություններին, ունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան: Նախադպրոցական ուսումնական հաստատությունը պատասխանատվություն է կրում երեխայի բնականոն զարգացման համար, ինչն էլ հիմք է հանդիսանում, որ դեպի դպրոց երեխայի անցումը լինի սահուն և հեշտ: Շատ կարոևոր է, որ ուսումնադաստիարակչական գործընթացը պլանավորելիս մանկավարժական աշխատողները հաշվի առնեն նախադպրոցական կրթական ծրագրերի պահանջները: Դրանք են՝ համապատասխանությունը նախադպրոցական կրթության չափորոշչին, կրթության աշխարհիկ բնույթը, երեխաների և մեծահասակների փոխգործունեության անհատակողմնորոշված (երեխայակենտրոն) մոտեցման ապահովումը, ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը, նախադպրոցական կրթության բովանդակության մեջ երեխայի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղարվեստական զարգացման, իրավունքներին և պարտականություններին, բնագիտության հիմունքներին ծանոթացման ներառումը: Բնականաբար, այս ամենը մեծապես կախված է բոլոր այն մասնագետների նվիրումից ու արհեստավարժությունից, ովքեր անմիջականորեն աշխատում են երեխայի հետ: Նախադպրոցական ուսումնական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման, նախադպրոցական կրթական չափորոշչային պահանջների բավարարման, պարապմունքների մեթոդական համար պատասխանատու են բոլոր նախադպրոցական մանկավարժական աշխատողները: Այս գործընթացի կարևոր

մաս է նաև նախադպրոցականներին հայրենիքին ու նրա մնայուն արժեքներին ծանոթացումը: Դաստիարակը պետք է փորձի ուսումնական պարապմունքը, հանդեսը այնպես կազմակերպի ու պլանավորի, որպեսզի կարողանա հետաքրքրել ու մոտիվացնել սովորողին, սիրել տալ հայրենիքը, ազգային արժեքներն ու ավանդույթները: Մանկապարտեզում ստացած հայրենիքի ու հայրենագիտության մասին գիտելիքները ամբողջանում, ավելի ակնառու են դառնում էքսկուրսիաների ժամանակ: Նախադպրոցականն իր աչքով է տեսնում հետաքրքիր թանգարանային նմուշներ, պատմական հուշարձաններ, մոտենում հայրենի բնությանն ու մշակույթին: Հայրենագիտական նախագիտելիքները հաղորդվում են միջին խմբում, ավելի համակարգվում, աբողջանում արդեն ավագ խմբում: Ուսումնական պարապմունքների ժամանակ հարկավոր է երեխաներին չդնել կաղապարների մեջ, թույլ տալ ինքնաարտահայտման, սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտելու: Հայրենաճանաչողական ուսումնական պարապմունքներ կարելի է անցկացնել նկարչության, երաժշտության շրջանակներում, կարելի է երեխաների համար կազմակերպել կինոդիտում, ծանոթացնել հայ անվանի մարդկանց, հերոսներին, գիտնականներին, արվեստագետներին: Սա նախադպրոցականի առաջին քայլերն են հայրենաճանաչության ճանապարհին, ուստի պետք է ամեն կերպ փորձել հետաքրքրնել նրանց: Հայրենասիրությունը դրսևորվում է տվյալ երկրում ապրող ժողովրդի նկատմամբ սիրով: Երբ ասում ենք հայրենիք, առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող մարդկանց: Մեզանից յուրաքանչյուրի համար հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց և մայրենի լեզվից: Աճող սերնդին հայրենասեր դաստիարակել նշանակում է մշտապես աշխատել հայրենիքի բարգավաճման, ժողովրդի բարօրության, բարեկեցության բարձրացման գործին նրան հաղորդակից և մասնակից դարձնելու համար, «որդեգրել» հայրենիքում ընդունված օրենքները, դաստիարակել դրանց ենթարկվելու ունակություն, հարգել սահմանված կարգ ու կանոնը,

Այսպիսով, նախադպրոցական կրթության համակարգը պետք է ուղղված լինի ոչ միայն գիտելիքներով հարուստ, մտավոր գործունեության ընդունակ երեխայի զարգացմանը, այլև նրա անձնային հիմնարար որակների և սոցիալական

հմտությունների զարգացմանը: Իսկ այդ համատեքստում առանցքային կարևորության հիմնահարց է հայրենասիրական դաստիարակությունը:

1.3. Էքսկուրսիաները, նպատակային զբոսանքները, թեմատիկ, մշակութային այցերը՝ որպես նախադպրոցականի հայրենասիրական դաստիարակության միջոց

Նախադպրոցական կրթության մեջ էքսկուրսիաները, նպատակային զբոսանքները, թեմատիկ, մշակութային այցերը զարգացնող, դաստիարակող նշանակություն ունեն: Դրանց հիմնական նպատակը նախադպրոցականների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, այն նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը:
Նման միջոցառումները բավականին նպաստավոր է անցկացնել նյութի նախնական ուսումնասիրությունից հետո: Էքսկուրսիաները, նպատակային այցերը կատարում են այն նույն գործառույթները, ինչ-որ ուսումնական պարապմունքները՝ ուսուցանող, դաստիարակող և զարգացնող: Այս միջոցով տեղի է ունենում նախադպրոցականի գիտելիքների խորացում առանձին առարկաների և երևույթների մասին, նրանք հնարավորություն են ստանում գործնականում տեսական գիտելիքները կիրառել, խթանվում են դիտումներ կատարելու կարողությունների զարգացումը, ուշադրության, հիշողության կենտրոնացումը, դաստիարակվում են սաների մեջ գեղագիտական ընկալումներ և հայրենասիրություն:

Այս պարագայում մեծ է մշակութային կենտրոնների, այդ թվում նաև թանգարանների, պատկերասրահների, մանկական ներկայացումների ու ֆիլմերի դերը, որոնք, ինչպես գիտակրթական, այնպես էլ մշակութային կենտրոններ լինելով, ունակ են լուծելու անձի զարգացման և կրթության հետ առնչվող ամենաբազմազան խնդիրներ: Ազգային արվեստի ու մշակույթի ցուցանմուշները, պատմական

հուշարձանները, եկեղեցիները բացառիկ հնարավորություն ունեն միաժամանակ ազդելու մարդու մտավոր, կամային և հուզական ոլորտների վրա: Այսպես նոր սերնդին են փոխանցում ոչ միայն մշակութային արժեքները և նրանց կոնկրետ պատմությունը, այլև դրանց միջոցով, ըստ իրենց տեսակի (պատմության, գրականության, երկրագիտական և այլն), ներկայացնում են մեր հայրենիքի ամբողջական կամ որևէ ոլորտի պատմությունը: Մշակութային ու ազգային ուղղվածության նպատակային այցերը սաների առաջ բացում են այն կարևոր պատմական իրողությունները, փաստերը, որոնք պարտավոր է իմանալ իր հայրենիքը սիրող յուրաքանչյուր քաղաքացի: Նման այցելությունների ժամանակ նախադպրոցականները ոչ միայն լսում, տեսնում, այլև մոտիկից ծանոթանում են այն առարկաների հետ, որոնք առնչվել են պատմական կարևոր իրադարձություններին՝ դրանց հաղորդելով ավելի գիտակցված բնույթ և ապահովելով ընկալման առավել հաճելի ու հեշտ տարբերակ: Կարևոր նշանակություն ունեն այցելությունները հարազատ բնակավայրի պատմության թանգարաններ: Այսպես երեխան վերաբերվում է իր բնակավայրին՝ որպես փոքր հայրենիքի, նրա մեջ ձևավորվում է սեր և հոգատարության: Հաշվի առնելով, որ 4-6 տարեկան երեխաների հետ տարվող աշխատանքների հիմքը խաղն է, բազմաթիվ թանգարաններ, պատկերասրահներ առաջարկում են խաղ-էքսկուրսիաներ՝ հաշվի առնելով նախադպրոցականների տարիքային առանձնահատկությունները:

Հիմք ընդունելով այն, որ օբյեկտիվ իրական աշխարհի ճանաչողությունը սկսվում է զգայությունից, նախադպրոցականի ուսուցման ու զարգացման պրոցեսում մեծ տեղ է տրվում զննականությունը: Զննական ընկալումը հեշտացնում է սաների գիտելիքների յուրացման պրոցեսը: Հայրենասիրական բնույթի էքսկուրսիաներն ու այցերը նախադպրոցական մանկավարժին հնարավորություն են տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, պատճառի ու հետևանքի փոխկապվածությունը և մարդու վերաստեղծող ու վերաշինող ուժը: Այս առումով դաստիարակը ազատ է ընտրություն կատարել, թե ուր և ինչ նպատակով կարող է կազմակերպել այցելություն: «Նախադպրոցական ուսումնական հաստատության

մանկավարժական աշխատողն իրավունք ունի ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնելու համար կիրառելու տարբերակային ձևեր՝ պահպանելով պլանավորմանը ներկայացվող սկզբունքներն ու չափանիշները»[2]:

Էքսկուրսիաները, թեմատիկ այցերը ընդլայնում են սաների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով, հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը, կենդանիները, մարդկային հասարակությունը, հայրենիքը:

Ինչպես հայ նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանն էր ասում. «Ուսուցման մեջ առաջինը և կարևորը դիտողականությունն է, երեխայի առաջին դիտողականությունները վարժեցնում են նրա զգայարանները, իսկ զգայարանն այն դուռն է, որով արտաքինը մտնում, թափանցում է ներքին աշխարհը, ինչ-որ չի անցնում զգայարաններով, նա առհասարակ չի մտնում հոգու մեջ, ուստի միշտ ուսուցման պրոցեսում նախ պետք է երևան գա գաղափարը, իսկ հետո՝ բառը: Միայն այդպես կարելի է դիտողականությամբ մշակել լեզուն, իսկ լեզվով՝ հոգին ու միտքը»[3]:

Էքսկուրսիաներն ու թեմատիկ այցերը բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև դաստիարակչական տեսակետից: Դրանք երեխայի մեջ զարգացնում են ուշադրություն ու դիտողունակություն, մշակում են գիտակցական կարգապահություն ու կազմակերպվածություն՝ մանկապարտեզից դուրս իրենց պահելու դաստիարակի կարգադությունները ժամանակին, ճիշտ ու անթերի կատարելու ունակություն: Ընթացքում ձևավորվում են շատ բարոյական նորմեր՝ ընկերասիրություն, կոլեկտիվիզմ, փոխօգնություն և այլն: Էքսկուրսիաների ու նպատակային այցերի ժամանակ բացահայտվում է սաների բնավորությունը, նրանց շատ թաքնված ընդունակություններ ի հայտ են գալիս, իսկ ստացած տպավորությունները ավելի անմիջական են և պահպանվում են ավելի երկար: Եվ պատահական չէ, որ ասում են լավ է մեկ անգամ տեսնել, քան տաս անգամ լսել:

---

[2] «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 7:

[3] Ա. Տեր-Գրիգորյան ,Գործնական աշխատանքները բացատրական ընթերցանության դասերին, Երևան , 1963:

Նախադպրոցական մանկավարժը պետք է սահմանի էքսկուրսիայի, նպատակային այցի կոնկրետ նպատակը և օբյեկտը, որպեսզի ըստ այդմ էլ պարզ լինի,թե էքսկուրսիայի ընթացքում երեխաները ինչ գիտելիքներ են ստանալու, ինչ նյութեր ուսումնասիրելու կամ հավաքելու, ինչ գործնական աշխատանքներ են կատարվելու: Սաների մեջ հայրենասիրության զգացմունքների խորացման տեսանկյունից անգնահատելի են հայրենագիտական էքսկուրսիաները: Էքսկուրսիաների միջոցով երեխան ծանոթանում է երկրի մակերևույթի ձևերին, զգում հայրենի բնության գեղեցկությունը և ամենից շատ սիրում ու գնահատում այն: Էքսկուրսիայի ժամանակ զարգանում է նաև երեխաների էսթետիկական ճաշակը, նրանք կարողանում են գեղեցիկը տեսնել ամենտեղ՝ բնության մեջ, կյանքում և աշխատանքում:

Գաղտնիք չէ, որ հոգևոր դաստիարակությունը կրթական գործունեության անբաժան, և կարևոր մասն է: Այդ գործընթացում առանձնահատուկ նշանակություն ունեն պետական, ազգային և եկեղեցական տոներին, հիշատակի օրերին, զոհված ազատամարտիկների, նշանավոր գործիչների հոբելյարներին նվիրված միջոցառումները, էքսկուրսաիները: Այսպես սաներն ավելի են մոտենում իրենց արմատների, ծանոթանում մեր հերոսների սխրանքներին, իրենց աչքով տեսնում են մեր հազարամյա վանքերն ու կոթողները: «Անկախ տարիքից՝հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտօպանելու պատրաստակամուն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ»[4]:

Նախադպրոցական կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունենք, որ հենց կրթության ու դաստիարակության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր-բարոյական և մշակութային արժեքների զարգացման, հայրենասիրական զգացմունքների արժեվորման: Գաղտնիք չէ, որ երեխան իր գիտելիքի կարողությունների ու հմտությունների նախնական պաշարը ստանում է նախադպրոցական հանրակրթական ուսումնական հաստատությունում,

[4] Յու. Ամիրջանյան, «Մանկավարժություն», Երևան, 2005, էջ 348:

որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը, ուստի հենց այստեղ է, մանուկը սկսում գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի դերում, ճանաչում ու սիրում իր հայրենիքը, փորձում ծավալել հայրենասիրական գործունեություն՝ ի շահ հայրենիքի հզորացման:

Հայրենասիրական դաստիարակության հենքը աճող սերնդի մայրենի լեզվով կրթությունն է, մեր բազմադարյա մշակույթին, ավանդույթներին, սովորույթներին ու պատմությանը ծանոթացումռ, կարճ ասած՝ ազգային ոգու, մտածելակերպի, հոգեբանության, վարք ու բարքի արմատավորումը մատաղ սերնդի մեջ: Իրականում հայրենասիրություն սերմանելն ամենաբարդ խնդիրներից է, որի արդյունքը միանգամից չի երևում: Դա ամենօրյա հետևողական աշխատանք է: Ապագա հայ զինվորը, բժիշկը, ուսուցիչը, ով դեռ իր առաջին քայլերն է անում կյանքում, պետք է գիտակցի, որ իր երկիրը երբեք անարդար պատերազմներ չի վարել, որ իր պարտքն է հայրենիքը պաշտպանել թշնամիներից ու կռիվ տալ անարդարության դեմ: Հենց այս նպատակին է ուղղված նախադպրոցականների մեր հայրենիքի հրաշալիքներին ծանոթացումը:

Այսպիսով, հայրենասիրական ուղղվածությամբ էքսկուրսիաների ու այցելությունների էությունը կայանում է բացատրությամբ՝ ցուցադրության, շրջագայության մեջ: Այն ինչը նախադպրոցականը տեսնում է, տպավորվում է նրա գիտակցության մեջ: Էքսկուրսիայի ժամանակ նախադպրոցական մանկավարժը սանի մեջ պետք է հետաքրքրություն առաջացնի դեպի հայրենիքը, հայ ժողովուրդն ու նրա պատմությունը, մշակույթը: Բնության մեջ անցկացվող էքսկուրսիաները լայն հնարավորություն են տալիս ծանոթանալ հայրենի բնաշխարհին, սիրել ու գնահատել մեր բնությունը: Եկեղեցիներ, վանքեր ու հայրենագիտական թանգարաններ այցելությունները նպաստում են նախադպրոցականների հայրենասիրական ոգու բարձրացմանը՝ նրանց մեջ սերմանելով սեր և հարգանք մեր կրոնի և կրոնական ծիսակարգերի նկատմամբ:

Ի վերջո հայրենիքը սիրելն ու հարգելը պետք է չպարտադրել, մատաղ սերունդը, վստահաբար, ունի այն մոտիվացիան, որ իր հայրենիքն ամենալավ ու ամենից

հարազատ վայրն է աշխարհի երեսին: Եվ որպես եզրափակիչ խոսք՝ հիշենք մեծն բանաստեղծի խոսքերը.

«Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,
Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,

Էս գորշ խըրճիթն է, Էս հին խըրճիթն է,
Գետի եզերքին, ծառերի տակին»: *Հովհ Թումանյան*

ԳԼՈՒԽ 2

2.1 Ուսումնաճանաչողական էքսկուրսիայի հաշվետվություն

Հաշվի առնելով էքսկուրսիաների ու հայրենասիրական ուղղվածության այցերի կարևոր նշանակությունը նախադպրոցականների հայրենասիրական դաստիարակության համար՝ սույն տարվա հոկտեմբեր ամսին իրականացվեց էքսկուրսիա դեպի Դսեղ՝ Հովհաննես Թումանյանի տուն թանգարան: Այցը բավականին բովանդակալից էր և ուսուցողական: Սաները ծանոթացան հայրենի բնությանը, մեծ խանդավառությամբ զբոսնեցին հարակից տարածքում, տեսան և հիացան Լոռվա անկրկնելի բնությամբ՝ աշնան անզուգական գույներով: Նրանց համար պատրաստվել էր փոքրիկ իրազեկող դասախոսություն՝ Հովհաննես Թումանյանի մասին: Փոքրիկները մեծագույն ուշադրությամբ լսեցին:

Աստիճանաբար մեր զրույցը տարանք հայրենասիրական արժեքների ուղղությամբ, ինչպիսին է, օրինակ, սերը և հարգանքը մեր հայրենիքի, նրա պատմության ու հոգևոր ու մշակութային ժառանգության նկատմամբ: Ուրախալի էր տեսնել, որ ոգևորությունը գնալով համակում էր բոլորին, և որ նրանք կարևորում էին ոչ միայն սերն ու հարգանքը, այլև պատասխանատվության զգացումը հայրենիքի հանդեպ: Իրենց մանկական պարզունակ տրամաբանությամբ նրանք, այնուամենայնիվ, կարևորում էին հայրենիքին որևէ կերպ օգտակար լինելու հանգամանքը: Սաները շրջեցին տուն թանգարանում: Սաները մեծ խանդավառությամբ լուսանկարվեցին և լավ ժամանակ անցկացրին:

Հաջորդիվ բնության գրկում ժամանցի ընթացքում, սաների հետ խմբային քննարկումների ժամանակ, վերջիններն ամփոփեցին իրենց տպավորությունները: Գիտելիքներն ամբողջացնելու համար նրանց տրվեցին ամփոփիչ հարցեր:

- Որտե՞ղ ենք մենք գտնվում:
- Սա ՀՀ ո՞ր մարզն է:
- Ի՞նչ գիտեք Հովհաննես Թումանյանի մասին:
- Որտե՞ղ է նա ծնվել:
- Ովքե՞ր են եղել նրա ծնողները:
- Ի՞նչ սովորեցիք այսօր:
- Ի՞նչն ամենաշատ հետաքրքրեց :
- Կցանկանայի՞ք կրկին այցելել այստեղ:
- Սիրու՞մ եք ձեր հայրենիքը:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ մեր նախնական նպատակին մենք հասանք: Սաները, բնության գրկում ժամանց ու հանգիստ վայելելուն զուգահեռ, ծանոթացան Լոռվա բնության հետ շրջեցին ու ծանոթացան մեր հայրենիքի գողտրիկ անկյուններին: Արդյունքում՝ դարձան ավելի հայրենաճանաչ ու հայրենասեր: Կարծում ենք, որ նմանօրինակ այցերն ու էքսկուրսիաները պետք է կրեն հաճախակի բնույթ, որպեսզի մատաղ սերունդը էլ ավելի մոտենա մեր մշակույթին, ավանդույթներին ու պատմությանը:

2.2. **Էքսկուրսիայի անցկացման մեթոդիական մանկապարտեզներում**

Էքսկուրսիայի ճիշտ անցկացումը դստիարակից պահանջում է էքսկուրսիայի նպատակի և բովանդակության ճիշտ պլանավորում, կազմակերպում և ստացված արդյունքների ամփոփում: Այդ տեսակետից էքսկուրսիայի կազմակերպման ժամանակ ուշադրություն պետք է դարձնել երեք հիմնական փուլերի վրա՝

1.Նախապատրաստում
2.Անցկացում
3.Ամփոփում

ա)Էքսկուրսիայի նախապատրաստումը.

Յուրաքանչյուր էքսկուրսիա որոշակի նպատակ պետք է ունենա, նպատակ, որը պետք է բխի մանկապարտեզի ծրագրի առաջադրած խնդիրներից ու պահանջներից:Էքսկուրսիայի նպատակը և օբյեկտը պետք է կոնկրետ ու որոշակի լինի, որպեսզի ըստ այդմ էլ պարզ լինի , թե էքսկուրսիայի ընթացքում երեխաները ինչ գիտելիքներ են ստանալու, ինչ նյութեր ուսումնասիրելու կամ հավաքելու, ինչ գործնական աշխատանքներ են կատարվելու և ինչի համար, երբ և ինչպես է անցկացվելու էքսկուրսիան:Երբ այսքանը արդեն դաստիարակի համար պարզ է և նա գիտի , թե ուր է էքսկուրսիա տանելու, երբ և ինչ նպատակով, կարող է որոշակիորեն պատկերացնել, թե ինչ հարցերի շուրջ հարկ կլինի խոսել էքսկուրսիայի ժամանակ, ինչ գիտելիքներ պետք է տա աշակերտին և ինչ չափով, ուստի ըստ այդմ էլ նա հաշվի կնստի ինքն իր հետ, թե նա ինչ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրություններ անցկացնելու կարիք ունի::Նյութերի ուսումնասիրությունից հետո պետք է կատարել էքսկուրսիայի վայրի ընտրություն, որոշվի ընթացքը և դեպի էքսկուրսիա տանող նպատակահարար ճանապարհը:

Պլան կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալ հիմնական հարցերը.

1.Էքսկուրսիայի թեման

2.Այն գիտելիքների համառոտ շարադրանքը, որ երեխաները պետք է ստանան էքսկուրսիաների ընթացքում:

3.Էքսկուրսիայի ընթացքն ու հաջորդականությունը, էքսկուրսիայի ընթացքում շոշափվող հիմանական հարցերը, երեխաներին տրվելիք խմբային կամ անհատական աշխատանքի առաջադրանքները:

4.Էքսկուրսիայի վերջում անցկացվող ամփոփիչ զրույցի համառոտ բովանդակության շարադրումը:

5.Էքսկուրսիայի կահավորումը՝ հանդերձանքը, գործիքները և այլն:

Էքսկուրսիայից մեկ-երկու օր առաջ դաստիարակը երեխաներին բացատրում է նպատակը, խնդիրները, երեխաների անելիքները: Առանց այդպիսի գործնականորեն ու հոգեբանորեն նախապատրաստության , էքսկուրսիան կդառնա աննպատակ ու անարդյունավետ:

Երեխաներին էքսկուրսիային նախապատրաստելու աշխատանքների մեջ մտնում

են նաև կարգապահության պահպանման ուղղությամբ տարվող միջոցառումները, զրույցը այդ ուղղությամբ:

բ)էքսկուրսիայի անցկացումը

Էքսկուրսիան սկսվում է նրանով, որ էքսկուրսիայի վայրում դաստիարակը ի մի է հավաքում բոլոր երեխաներին, հիշեցնում էքսկուրսիայի նպատակը, տրված առաջադրանքները, երեխաների անելիքներն ու պարտավորությունները: Էքսկուրսիայի ժամանակ դաստիարակը երեխաների մեջ պետք է հետաքրքրություն առաջացնի դեպի օբյեկտը, որպեսզի երեխան անհրաժեշտ ուշադրությամբ դիտի այն:

Այժմ քննարկենք այն հարցը, թե ինչպես կարելի է էքսկուրսիայի ընթացքում ժամանակը օգտագործել ռեալ և բացատրությունը զուգակցել ցուցադրմանը: Օրինակի համար համատեղ ընթերցանությամբ անցկացվող <<բլրի գագաթին>> մշակենք էքսկուրսիայի միջոցով:Ենթադրենք նախապատրաստական մասը ավարտված է և մենք կանգնած ենք բլրի ստորոտին:Դաստիարակը զգուշացնում է , որ մենք կանգնած ենք բլրի ստորոտում և քիչ հետո բլրի լանջով բարձրանալու ենք մինչև ամենածայրը՝ գագաթը:Բարձրանալիս մեկ-մեկ կանգնենք ու նայենք մեր չորս կողմը:ԵՎ շատ բաներ, որ ստորոտում կանգնած ժամանակ չէինք տեսնում, կտեսնենք , քանի որ բարձրանալիս մեր տեսողության սահմանը ընդարձակվում է:ՈՒշադրություն դարձնեն այն բանի վրա, թե ինչպես վեր բարձրանալիս բուսականությունը գնալով քչանում է, չորանում, փշատերև դառնում: Դա նրանից է, որ լանջը շատ քարքարոտ է և բույսերը ջրի կարիք են զգում:

Այժմ մենք գտնվում ենք բլրի գագաթին:Կնստենք, կհանգստանանք և կդիտենք շրջապատը:Ահա երևում են հարթավայրեր, գետեր, ցորենի արտեր…

Այստեղ նրանք պարզ պատկերացում են կազմում երկրի մակերևույթի ձևերի ՝ լեռնաշղթայի, լեռան, հարթավայրի, ձորի, գետի և այլնի մասին ըստ իրենց ընկալման մակարդակի:

Էքսկուրսիաները շատ երկար ու ձանձրալի չպետք է լինեն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքում կտրուկ կերպով աճում են երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման հնարավորությունները՝ առաջացնելով նոր պահանջմունքներ, հետաքրքրությունները: Վաղ նախադպրոցական տարիքից մինչև ավագ նախադպրոցական տարիք էական զարգացում է ապրում մտածողությունը: Խոսքի զարգացմանը զուգընթաց՝ այլ մարդկանց հետ երկխոսության զարգացման արդյունքում մտածողությունը անցնում է դեպի կոնկրետ գործառնությունների մակարդակ: Ուստի հենց այս տարիքը բավականի նպատակահարմար է երեխային ծանոթացնել հայրենիքին, սիրել տալ իր տունը, քաղաքը, երկիրը հայրենակիցներին: Հենց այս ամենի ամբողջությունն է, որ անվանում ենք հայրենասիրություն: Եթե նպատակ է դրվում սաների մեջ ձևավորել նվիրական զգացումներ հայրենիքի հանդեպ, ապա չպետք է բացառապես բավարարվել խմբասենյակում իրականացվող ուսումնական պարապմունքներով: Այս համատեքստում իրենց կարևորագույն առաքելությունն ունեն էքսկուրսիաները, թեմատիկ այցերը, զբոսանքները, որոնց շնորհիվ նախադպրոցականը ճանաչում է իր հայրենիքը, մոտիկից շփվում հայրենիքի կարևոր արժեքների հետ, պատկերացում կազմում մշակույթի, արվեստի, ազգային ավանդույթների մասին: Այս ամենն իրենց անփոխարինելի դրոշմն են թողնում նախադպրոցականի աշխարհաճանաչողության, աշխարհընկալման վրա, նրանց մեջ ձևավորում հստակ սկզբունքներ ու համոզմունքներ: Նախադպրոցական տարիքին զուգընթաց՝ տեղի է ունենում նկատելի փոփոխություններ: Ավելի է ամրանում համակրանքի զգացումը կարեկցումը, ուստի այս տարիքում բավականաչափ նպաստավոր է, որ երեխան սովորի սիրել նաև իր հայրենիքը, գիտակցի դրա դերն ու կարևորությունն իր կյանքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ»:
2. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 7:
3. Ա. Տեր-Գրիգորյան ,Գործնական աշխատանքները բացատրական ընթերցանության դասերին, Երևան, 1963:
4. Յու. Ամիրջանյան, «Մանկավարժություն», Երևան, 2005, էջ